




**DIOCÈSE DE FRANCE
DE L'ÉGLISE APOSTOLIQUE ARMÉNIENNE**
Son Excellence Monseigneur Vahan Hovhannessian, Primat de France

**Է – ԹԵՐԹԻԿ
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ**

N°. 13A, Tome 2, le 9 août 2015

ՇԱԲԱԹԱՎԵՐՋԻ ԽՈԿՈՒՄ/ՀԱՆԴՊՈՒՄ ԴՊԻՐՆԵՐՈՒ ՀԵՏ

Հայ Առաքելական Եկեղեցւոյ Ֆրանսայի թեմի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով խոկումի դաստիարակչական շաբաթավերջ մը կազմակերպուեցաւ սուրբ խորանին ծառայող Փարիզեան շրջանի դպիրներուն համար, կազմակերպութեամբ Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Վահան Եպս. Յովհաննէսեանի: Համագումարը տեղի ունեցաւ Լիզիեղի միջնադարեան դղեակի մը մէջ, վեհանձն հովանաւորութեամբ Պրն. Սարգիս Պետոյեանի: Փարիզի տարբեր ծովներէ 16 դպիրներ երկու օր միասին անցուցին, գլխաւորութեամբ Վահան Սրբազանի եւ ընկերակցութեամբ Տ. Ժիրայր Օ. Վրդ. Թաշճեանի, Տ. Աւետիս Ա. Քինյ. Պալըզեանի եւ Տ. Յուսիկ Քինյ. Սարգսեանի, նիւթ ունենալով Աստուածաշունչի զանազան հատուածներ, սարկաւազներու պատրաստութեան յատուկ գիտելիքներ, ծիսակատարութիւններու մասնակցութեան համար անհրաժեշտ բաժիններ: Դասախօսութիւններու եւ միասնական աղօթքներու հետ զուգահեռ մասնակիցները իաճելի ժամանակ անցուցին միասնաբար խաղեր կազմակերպելով եւ ծով երթալով: Առաջնորդ Սրբազանը շեշտեց այս տեսակի հանդիպումներու կարեւորութիւնը.....




100-ԱՄԵԱԿԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՆՈՐ ԽԱՉՔԱՐԻ ԲԱՑՈՒՄ

Կիրակի 12 Յուլիսը՝ Վարդավառի տօնը շատ յատկանշական օր մըն էր Իսի Լէ Մուլինոյի հայութեան համար, շնորհիւ շրջանի հոգեւոր հովիւ Տ. Աւետիս Ա. Քինյ. Պալըզեանի եւ Ծխական Խորհուրդի ատենապետ Պրն. Հայկազ Կեօրտեպաքի եւ Խորհուրդի անդամներու կազմակերպչական անխնայ ճիգերուն: Ոչ միայն անոր համար որ այդ օրը ներկայ էին զանազան հիւրեր եւ եկեղեցականներ, ինչպէս Տ. Սիւռն Օ. Վրդ Գրգրզեան, Տ. Պարթէւ Աբդ. Բարսեղեան Ս. Էջմիածնէն, Հ. Յակոբոս Վրդ. Չոփուրեան Կ. Պոլսոյ Մխիթարեան դպրոցէն: Ոչ ալ միայն այն պատճառով որ օրուան արարողութիւններուն կը նախագահէր Առաջնորդ Սրբազանը, որ եւ օրուան իր պատգամը ուղղեց ներկաներուն: Բայց ոչ իսկ այն պատճառով որ այդ օրը ներկայ էին զանազան քաղաքական անձնաւորութիւններ: Այլ գլխաւորապէս այն պատճառով, որ այս տօնին առթիւ բացումը կատարուեցաւ նոր խաչքարի մը, նուիրուած Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցին: Պատարագէն անմիջապէս վերջ թափօրը ուղղուեցաւ դէպի խաչքարը, որ գետեղուած




ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՋԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿ ՊՍԱՐԱԳԸ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Կիրակի 18 Հոկտեմբեր 2015-ին Գերշ. Տ. Վահան Եպս. Յովհաննէսեան Լիոնի մէջ պիտի մատուցէ իր անդրանիկ պատարագը որպէս Թեմակալ Առաջնորդ: Այս առթիւ Փարիզի Ս. Յովհաննէս Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ Տիկնանց Յանձնախումբը շաբաթավերջի պտոյտ մը կը կազմակերպէ դէպի Լիոն, 16-18 Հոկտեմբերին: Երթուղարձ TGV-ով (Ա. կարգ), պանդոկ նախաճաշով եւ պտոյտներ քաղաքի մէջ Place Bellecour, Vieux Lyon / Saint Jean, Perrache, Amphithéâtres, Fourvière, Parc des Hauteurs, Mur Peint, Terreaux, Cordeliers, Berges du Rhône, et Place des Jacobins. Ծրագրին մէջ չեն մտներ ճաշերն ու ընթրիքները եւ անձնական ծախսերը: Նկատի ունենալով որ տեղերը սահմանափակ են, արձանագրուելու վերջին պայմանաժամն է Երեքշաբթի 8 Մեպտեմբերը: Յաւելեալ տեղեկութիւններու համար 01 43 59 67 03 – 06 15 02 76 84. Ծախսերու մասնակցութիւն 250 €




ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ – 16 ՕԳՈՍՏՈՍ 2015

Այս տարի հայկական եկեղեցիները Ս. Աստուածածնի Վերափոխումը կը տօնեն Կիրակի 16 Օգոստոսին: Ս. Աստուածածնի երկրէ երկինք փոխադրութիւնը Վերափոխումը Հայ Եկեղեցին կը տօնէ Օգոստոս 15-ի ամենամօտիկ Կիրակին: Պատարագի աւարտին տեղի կունենայ խաղողի օրհնութիւն: Ըստ աւանդութեան, Ս. Մարիամ Աստուածածին, խաղաղօրէն իր հոգին աւանդեց եւ թաղուեցաւ առաքեալներուն կողմէ: Ս. Բարթողոմէոս առաքեալ, թաղման ժամանակ բացակայ էր: Վերադարձին ան այցելեց Աստուածամօր գերեզմանը: Երբ դամբարանի քարը վերցուցին, տեսան որ մարմինը այնտեղ չէր: Երկինք փոխադրուած էր: Այս աւանդութեան վրայ հիմնուելով, մեր Եկեղեցւոյ հայրերը հաստատեցին Աստուածածնի Վերափոխման տօնը: Այս տօնի օրը Հայ Եկեղեցին կը կատարէ խաղողի օրհնութիւն, այն պատճառով որ գինին, որ Քրիստոսի արիւնը կը խորհրդանշէ, կը պատրաստուի խաղողէն, որ Ս. Կոյս Մարիամը կը խորհրդանշէ: Վերափոխման տօնը անուանակոչութեան օրն է ոչ միայն Մարի, Մարիամ, Մարօ անունը կրողներուն, այլ նաեւ Ս. Աստուածածնի տրուած մակդիրներով կոչուող անձերուն, ինչպէս Թագուհի, Սրբուհի, Մաքրուհի, Մարգրիտ, Տիրուհի, Ազնիւ, Անթառամ, Արուսեակ:



ՈՒՌՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ Ս. ԷԶՄԻԱԾԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆ

Հայ Եկեղեցւոյ Ֆրանսայի Թեմի Առաջնորդի Գրասենեակը ուրախութեամբ կը ծանուցանէ ուխտագնացութեան կազմակերպումը դէպի Ս. Էջմիածին, Հայաստան, Միւռնօրինէքի առթիւ, որ տեղի պիտի ունենայ Ս. Էջմիածնի մէջ Կիրակի 27 Մեպտեմբերին: Թեմակալ Առաջնորդ Գերշ. Տ. Վահան Եպս. Յովհաննէսեանի հովանաւորութեամբ, ուխտագնացութիւնը պիտի առաջնորդէ Իսի Լէ Մուլինոյի հոգեւոր հովիւ Տ. Աւետիս Ա. Քինյ. Պալըզեան: Ս. Մարիամ Աստուածածին Եկեղեցւոյ Տիկնանց Յանձնախումբի կազմակերպութեամբ, ուխտագնացութիւնը պիտի սկսի Չորեքշաբթի 23 Մեպտեմբերին եւ պիտի աւարտի Չորեքշաբթի 30 Մեպտեմբերին: Ծախսերու մասնակցութիւնն է 1500 եւրօ, որ կը ներառէ օդանւուղի երթուղարձ, նախաճաշ-ճաշ-ընթրիք, այցելութիւն սուրբ վայրեր: Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռաձայնել Եկեղեցւոյ քարտուղարութիւն 01 46 44 28 52 կամ Տ. Աւետիս Ա. Քինյ. Պալըզեանին 06 60 98 10 41.



ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ՀԱՆԴՊՈՒՄՆԵՐ ԱՍՏՈՒԱԾԱԾՈՒՆԻ ՄԱՍԻՆ

Ինչպէս նախապէս յայտարարուած էր, Թեմակալ Առաջնորդ Տ. Վահան Եպս. Յովհաննէսեան Մեպտեմբեր ամսուն կը ձեռնարկէ Աստուածաշունչի մասին դասախօսութեան շարքի մը, խորացնելու համար մեր գիտութիւնը Աստուածաշունչի մեկնաբանութեան եւ Հայ Եկեղեցւոյ ուսուցումներուն ընդմէջէն: Առաջին հանդիպումը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի 2 Մեպտեմբեր 2015 ժամը 20-ին, Ս. Յովհաննէս Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ «Նուրհան Ֆրէնկեան» սրահին մէջ, բաժակ մը գինիի շուրջ: Այս առաջին դասախօսութեան ընթացքին Վահան Սրբազան պիտի բացատրէ Աստուածաշունչի մեկնաբանութեան հայկական առանձնայատկութիւնները: Մասնակիցները ազատօրէն կրնան հարցումներ ուղղել հաւատքի, Հայ Եկեղեցւոյ եւ Աստուածաշունչի մասին: Դուր լայնօրէն բաց է բոլորին համար: Մուտքը անվճար է: Կրնաք պարգապէս ձեր հետ բերել ձեր հայերէն կամ ֆրանսերէն Աստուածաշունչը: Յաւելեալ մանրամասնութիւններու համար bureauduprimat@yahoo.fr , հեռաձայն 01 43 59 67 03.



ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

- **ՈՒՌՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ԵՐՈՒՍԱՂԵՄ 15-23 ՅՈՒՆԻԱՐ :** Կազմակերպութեամբ Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ Մայր Տաճարի Տիկնանց Յանձնախումբին Հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Ֆրանսայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Վահան Եպս. Յովհաննէսեանի Մեկնում Ուրբաթ 15 Յունուար 2016. Վերադարձ Շաբաթ 23 Յունուար 2016: Սակ 1750 €: Անհատական սենեակի համար յաւելեալ 470 €. Արձանագրութեան վերջին պայմանաժամ **4 Հոկտեմբեր 2015:** Յաւելեալ տեղեկութիւններու համար դիմել.- Տիկնանց Յանձնախումբին– 06 15 02 76 84, Եկեղեցւոյ քարտուղարութեան– 01 43 59 67 03:
- **ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՌԱՋԻՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ:** Թեմիս Առաջնորդն ու Թեմական Խորհուրդը հաճոյքն ունին հրաւիրելու մեր հաւատացեալ ժողովուրդը Թեմական Առաջին Ճաշկերոյթին որ տեղի պիտի ունենայ Փարիզի Hôtel du Collectionneur սրահին մէջ ընդհանուր յայտարար ունենալով կառուցանել մեր Եկեղեցին աւանդութեան եւ նոր ժամանակներու հրամայականով: Ճաշկերոյթի նուիրատուութիւնն է 125 եւրօ: Սոյն ճաշկերոյթը տեղի պիտի ունենայ Շաբաթ 10 Հոկտեմբերին: Յաւելեալ տեղեկութեանց դիմել bureauduprimat@yahoo.fr: